Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հրատարակութիւն Մոսկ. ամսագրի

ՎԱՀԱՆ ՄԻՐԱՔԵԱՆ

ԼԱԼՈՒԱՐԻ ՈՐՍԸ

ՊՕԵՄԱ

ԹԻՖԼԻՍ

Տպար. Վրաց Հրատ. Ընկ. § Тип. Груз. Изд. Т—ва.

Большая Бадзская ул.

1901

891.99
Մ-76

редакція журнала Кавказ. вѣстникъ.
19 NOV 2011
Կ: 891.99
Մ-Ֆb աղ.

ՎԱՀԱՆ ՄԻՐԱՔԵԱՆ

ԼԱԼՈՒԱՐԻ ՈՐՍԸ

ՊՕԵՄԱ

(Արտատպուած «Մուրճ» ամսագրից)

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐՈՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Խ.Հ. Публичная Библиотека
7/II-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՈՒՆ

ԹԻՖԼԻՍ
Տպար. Վրաց Հրատ. Ընկ. § Тип. Груз. Изд. Т—ва.
Большая Ванкская ул.
1901

02.07.2013

43966

Дозволено цензурою. Тифлисъ, Ноября 1 1901 года.

ԼԱԼՈՒԱՐԻ ՈՐՍԸ

(Պոէմա)

I

Ծագում է մանուկ արևը գարնան
Կովկաս լեռների ձիւնի պատնէշից,
Զարթնում են մէկ-մէկ սարերն անընման
Ձմրան անվրդով քնի մշուշից.
Ահա Լալուարի[1]) վիթխարի ուսին
Բազմում է արփին թարմացած ոյժով,
Սարեր ու ձորեր իրար երեսին
Նայում են, ժըպտում ամպի մշուշով...
Վերջին ձիւներն էլ արդէն հալ ընկան,
Արտասուեց խոզոյն լեռների հըսկան.
Ամեն մի ձորից աղբիւր է հոսում,
Ամեն մի թըփից բիւլբիւլ է խօսում:

---

[1]) Լալուայ ամենաբարձր սարը։

Եւ գալար հովիտ, և՛ ժայռի կըրծքեր
Արձագանք տալով գարուն են հընչում։
Զըմրան փարախից հովուական երգեր
Զեփիւռի թեւով սարերն են թռչում։
Ծաղկալից աշխարհ անվերջ ձորերի
Բացւում է, ժըպտում կոկոնից զուարթ,
Փարթամ գեղութեան ոգին Գուգարքի
Շընչում է գարնան բոյրով անաղարտ.
Ամպերն էլ իրար համբոյրներ տալով,
Զըւում են կայտառ, Լալուարը դըրկում;
Առաջին անգամ ~~խանա~~ որոտալով,
Գուգարք աշխարհին ողջոյն են երգում։
Եւ հայրենիքում փայլակ-կայծակի
Գիշերուայ դրոշմած գաղտնի համբոյրներ
Երգում են երկրին սէրը երկնքի,
Դողում են սիրուց սարեր ու ձորեր.
Եւ խորհրդաւոր մի թովիչ ձայնով
Խօսում են ներքանք իրար հետ փարւում,
Երգում են, խընդում; հազար բերանով
Լալուարի վիթխար հասակը գովում։

Ահա գարնան հետ և շարան-շարան
Դաշտավայրերից դէպի զով սարեր

Զբղուեց սայլերի, ուղտերի քարուան—
Փախչում են շոքից թէ թուրք, թէ հայեր։
Թընդում են ձորում զանգի հընչիւններ,
Ձիերի խրխինջ, պայտերի դոփիւն,
Մէկ-մէկի կըցած անվերջ քարուաններ
Քաշում է նառը, ահեղ մըռնչում։
Ո՛րը տանում է ալաչխի [1]) քեչան,
Կուժն ու խնոցին, ճիպոտն ու չաթան [2]).
Ո՛րն էլ զարդարուած դեր [3]) ու փընջերով
Օրօրւում, անցնում լեռան լանջերով.
Բայց նառն ինքնագոհ քայլում է հանդարտ՝
Բոժոժ ու զանգեր վըզին ու կըրծքին,
Եւ օրօրելով կապերտներ ու զարդ,
Գեղեցիկ հարսն է նա տանում մէջքին.
Մերթ բարկանալով, կանգնում է հըպարտ,
Մերթ փրփուր թափում կատղած բերանով,
Մերթ երկար շուրթը կախելով բարդ-բարդ,
Նա պարծենում է գեղեցիկ բեռով։
Բռնել է ճամբէն ~~խանա~~ իրարանցում,
Դոփում են ձիեր, սանձերը կըրծում—

---

[1]) Հովուական վրանի մեծ տեսակը։

[2]) Բարակ ճիպոտներից հիւսած վրանի շրջապատ։

[3]) Թղթերում կարած՝ չար աչքից ապահովող ազօթքներ։

Աշնիւ մետաքսից ոսկեթել գործած,—
Աղալարիներ [1]) թամքերին գրցած,
Հուժկու կրծքներից կապած թալիսման [2]),
Արեւելեան ճոխ արծաթն ու ոսկին.
Ճերմակ զաթիպան, քօղն ամպի նման
Փըռփըռում են գեղ հարսների դէմքին։

Լեռների տօնն է. մարդ և անասուն
Ուրախ երգերով դիմում են սարեր,
Մոռնալով ձըմրան քաշած վայնասուն,
Ծաղիկ փնջերով անցնում են ձորեր.—
Անցնում են արագ քոչ-քոչի միջով.
Դարնան արևից փայլում են դէնքեր,
Եւ թարմ կենսաբոյր թաւիշ կանաչով
Բացւում են, ժըպտում սարուորի դէմքեր.
Փոքրիկ երեխան պինդ մէջքին կապած՝
Խեղճ հովուի կինն էլ վազում է ոտքով,
Օգնում է մարդուն՝ գոհ և սրտաբաց,
Բախտի որոշած ծանրը վիճակով.
Մայում են, բայում գառըն ու մաքին,
Թընդում կովերի, հորթերի բառաչ.

1) Մետաքսից գործուած ձիու ծածկոց։
2) Թղթերում կարած՝ չար աչքի դէմ աղօթքներ։

Իսկ տըրտընգալով գոմէշը ձագին
Կանչում է դանդաղ վազելով առաջ.
Վազում են յոգնած շընները հօտի
Եւ լեզուն հանած թանչին են տալիս.
Լըսւում է յանկարծ ձայնը լակոտի,
Որ քոչից ընկած կալանչ է դալիս։

Քարուանի ծայրը սարերը հասաւ,
Հասաւ ու ձուլուեց թուխ ամպերի հետ.
Վըրան-վըրանի յետևից բըսաւ
Ծաղիկների մէջ գոյն-գոյն սիրաւէտ.
Ալաչուխ, դադա [1]), անվերջ վըրաններ,
Շըրջան կազմելով սառն աղբրի ափին,
Ինչպէս ծեր արծուի կարկատած բըներ,
Ցենուեցին մէկ-մէկ բարձրը քարափին.
Դաշտեցի հայն էլ սառ ջրի կարօտ՝
Եկել է, դըրել բինէն այս ամառ
Լօք [2]), Լալուար, Լեջան [3]) աղբիւրների մօտ,
Շոքերից աղատ ապրելու համար։
Գուդարք սարերի սիզաւէտ լանջին
Բազմել են հայի, թուրքի բինաներ,

1) Հովուական վրանի փոքր և հասարակ տեսակը։
2) Լոռուայ սարերից մէկը։
3) Լոռուայ սարերից մէկը։

Բայց դարձեալ խառնուած քոչ-քոչի միջին՝
Դեռ երերում են ուղտի քարուանները։
Խրրինջում է ձին, կովը բառաչում,
Բոլորն էլ իրանց իւրան են ճանաչում.
Մայում է անուշ ամլիկը [1]) դառան.
Սարեր ու ձորեր նորից կեանք առան։

Գիշերը հասաւ. մթին է ճամփան.
Մարում է կամաց աղմուկը քոչի.
Առուակի ափին քարուաններն իջան.
Կանչում են՝ «տղերք, ապրանք չը կորչի»։
Ձիերի ջոկեր, ուղտերի քարուան,
Սայլերի ճռռոց, ոչխար ու տաւար
Գրանելով ձորում գիշերն իջևան,
Հանգիստ են առնում միւս օրուան համար։
Կրակի վերայ առուակի ափին
Մի տեղ ընթրիք են շտապ պատրաստում;
Մի տեղ էլ կորած դառանն ու հոթին
Սար ու ձոր ընկած հովիւն է կանչում։
Մի այլ տեղ ուրախ շրջան բոլորած՝
Ուտում են նրրանք կաթն ու խորոված.

[1]) Մօր հետ անբաժան ապրող և ծծող դառը։

Գիշերն էլ արդէն մնջում է, լռում,
Ցոգնած քոչուորին հանգիստ քուն բերում։
Միայն մի կով է դարձեալ բառաչում
Եւ քունը կրտրած հորթուկին կանչում.
Լսելով նրրան գիշերն անդադար,
Հեռում է արխուր ծերունի անտառ։
Ամպի փէշերը կախած մի ծայրին՝
Լալուարն էլ կարծես նոյն վիշն է զգում,
Ինչպէս վիրաւոր արծիւը ժայռին,
Թևերը փռած քոչուորին հսկում։
Բայց Լօք սարերի կանաչ լանջերում
Մի բինա էլ կայ, որ դեռ չի քընում.
Այնտեղ խարոյկի շուրջը բոլորած՝
Տեսած ու լսած արկածն են պատմում,
Եւ մեծ ու փոքրը ականջներ լարած՝
Աշուղ-Գիքոյի երգերն են լսում.
Պատմում է, երգում աշուղն անցեալից,
Զորերում տեսած հին իգիթներից,
Կրակին դրցած կաղնի մեծ գերան՝
Սարուորն էլ արթուն լսում է նրրան։
«Լսե՛լ էք, տղերք, ում ալաչուխն է
Լալուարին բաղմած արծուի նման.

Լըսել էք՝ էն ուր օջաղի ծուխն է
Խեղճ ու նաչարին միշտ լինում դարման [1]).
Լըսել էք՝ ինչպէս բազէն ինքնակամ
Նըրանից ազատ որս չի պըտըրտում:
Նըրա մի ձէնը, անունը անգամ:
Մարդուն, հարամուն սարսափ են ազդում:
Եւ ուզում է միշտ ամեն մի սարուոր
Էն ալաչուվին լինել դըրացի,
Ցիշելով նըրա տիրոջն ալեոր,
Առանց օրհնելու չի նըստում հացի»։

Տըղերքն զմայլած աչուղի սազով՝
Փարուեցան նըրա զառամած վըզով.
—Շատ բան ենք լսել Աւագի մասին,
Բայց դեռ կարօտ են նըրա երեսին.
Քընած թէ արթուն, թէկուզ երազում
Ամենքն էլ նըրա մասին են խօսում:
Պատմում են ահով դաշտին ու սարին,
Թէ ինչպէս է նա պատժում միշտ չարին,
Թէ ինչպէս երէն փախչելիս հովտում
Հեռուից էլ նըրա ձէնն է ճանաչում.

---

1) Դեղ։

Բայց, ապի, ապի, չենք տեսել նըրան,
Երգիր Աւագից մի բանի բերան.
Մենք կը տանք առատ քեզ եզ ու պանիր,
Դու իգիթներին լաւ գովաբանիր»։
Եւ նա լարելով նորից սիմերը,
Երգում է՝ որքան քաջ են հընները.—
«Աւագ-որսկանի անունն է մենակ
Սարերին յայտնի ամեն մի մարդու,
Աւագ-որսկանի ձէնն է մենակ
Լալուարին գոռող որսից ազդու.
Մանուկ օրերից նա որբ մընալով,
Ապրել է ինչպէս սև ամպը սարին.
Օրօր է երգել քամին սուլելով
Եւ նա ընչել է մամռոտած ժայռին,
Մըթին ձորերի ահաւոր կիրճում
Սիրել է թանձը վառօդի ամպեր.
Ուր փայլակ-կայծակ մահ են շառաչում,
Գըրկել է կայտառ սըլաք ու շանթեր.
Ընկերն է եղել մի հին հըրացան,
Իսկ անուշ երգը՝ գընդակի բըզզոց,
Թըշնամու ջարդը ահից ցիրուցան,
Հարան-տարանը և տուր ու գըմփոց։
Թէև նա ծեր է ութսուն տարեկան,
Բայց նըրա նման չը կայ մի որսկան.

Աչքի լուսի պէս դեռ գէնք է սիրում;
Երկնքի ծոցից էլ որս է բերում.
Դեռ հեծնում է նա ձին արագավազ,
Սև ամպերի հետ թռչում սար ու ձոր,
Դիտելով լուսնի սահը նազկնազ,
Ցիշում իր թափած արիւնը ծոր-ծոր.
Անցնում է ձրգուած անտառի խորքում
Նեղ օձապտոյտ ժայռոտ կածանը,
Որից հոսում է, առուն աղմկում
Կամ թէ դղրդում խուլ հրացանը,
Ուր միշտ ծարաւի թշնամու արեան՝
Նա թափառելով գիշերը անահ,
Մրռայլը դէմքին դրժոխքի նման
Նամարդի [1]) համար պատրաստել է մահը»։
Զիբուխի վերայ կերակ դրնելով,
Աչուղը կտրեց իր երդի թելը.
Իսկ մէկն էլ այսպէս նրան հարցնելով,
Կերակին դարսեց նորից փայտերը։

— Բա՛, ապի՛, ապի՛, դեռ չէս իմացել,
Մի նոր իգիթ կայ սարերը ընկած,
Աւագ-որսկանից յետ չի մընացել,
Դեռ նրա պէս դող աշխարհ չի եկած.

[1]) Ցմարդի։

Զահէլներիս մէջ նրա հասակում
Ոչ ոք չի եղել էնպէս շընորհքով.
Ատծու գիշերը անցնում է, զարկում
Ամենահարուստ բէկի օբէքով.
Արիւն է կաթում էն օրը սրրտից,
Թէ որ չի թռցնում ձի, տաւար հանդից.
Ո՛չ աղդ ունի նա, ո՛չ տէր-տիրական.
Կարօ է նրրա անունն իսկական.
Բայց մարդ չի մընում որ չը թալանի,
Թուրքերն ասում են «Դալի-Էրմանի» [1]).
Էլ նրրա ահից, հարան-տարանից,
Հեռու չեն քրշում ապրանքը տանից»։

Մինչդեռ խօսում էր Կարօյի մասին
Վառ յաւիշտակուած երիտասարդը,
Աչուղը կանչեց, զարնելով սաղին.
«Դէ՛, տեսէ՛ք՝ ո՞ւր է քաջ տըղամարդը.—
Լսել եմ, գիտեմ էդ աւազակին,
Բայց ո՛ւր դող Կարո՞, ո՛ւր Աւագ-որսկան.
Աւագն է՝ ինչպէս Լալուարն ահագին,
Կարօյի նման բըլուրներ շատ կան.

[1]) Գիժ-հայ։

Թէև մարդիկ է Կարօն կոչոպատում,
Չի, տաւար հանդից քըշում ու փախչում,
Բայց դուք չահել է՝, Աւագ-օրսկանին
Ինչպէս որ հարին է չէք էլ ճանաչում.
Կարօյի նման ձիու գողերին
Նա իսկի մարդու տեղ էլ չի դնում։
Որսկան եմ ասում ոչ թէ արջերի,
Որ տանձ ուտելով ապրում են մէրում.
Որսկան եմ ասում նամարդ թիւրքերի,
Որ հայրենիքին փորձանք են բերում.
Որսկան եմ ասում, որ գող ու չարին
Մատաղ է անում կարմիր գընդակին.
Որսկան եմ ասում, որ խեղճ-նաչարին
Պահում է սիրով իր թևի տակին,
Որ ինչպէս ձիւնը ամպամած սարին
Գըլուխ չը թեքած նամարդի սըրին՝
Մի դաս է առել լեռներից դաժան—
Աչեան վըրէժը արիւնով առնել,
Քընած թէ արթուն զէնքից անբաժան՝
Հայրենի սիրով ապրել ու մեռնել.
Որի ձէնից էլ գընդակ է բըզզում,
Անցած ձորից էլ արիւն է հոսում,
Եւ միշտ վառօդն է ամպերով բուրում,
Ինչպէս սրբազան խունկը տաճարում,

Բայց և բարի է Աւագ-օրսկանը—
Խօսքը օրէնք է, գործը՝ յաղթութիւն.
Նա տարածում է գուրսը թէ տանը
Իր ազգու ձէնով սէր ու հաշտութիւն»։
Երբ խաչ-հանելով սուրը պատկառանքով
Ծերը վերջացրեց երգը օրհնանքով,
Տըղերքը նորից խնդրեցին նըրան.
—Ապի չան, ապի, երգիր որսկանից.
Սիմերդ անուշ, դու բաղցրաբերան,
Մենք չենք հեռանալ քո սազի ձէնից։

«Աւագ-օրսկանի արած գործերը
Շատ են ու երկար, սկսեց ծերը,
Բայց ես կը պատմեմ շատերից մէկը,
Թէ ինչպէս փախաւ որսկանից բէկը։
Սըրանից կըլնէր տաս տարուց էլ վաղ,
Դըրացի էր մեզ Սալմանի օրէն [1]).
Թալանում էր նա հային աչ ու ձախ,
Աղա էր նըրա ամեն մի գեադէն [2])։
Մի օր դուրս եկաւ Սալմանի բուղէն [3]),
Գոռալով վազեց ինչպէս հըրեղէն.

---

1) Պրանների խումբ։
2) Ծառայ։
3) Ցուլ։

ՀԱՅ.Ս.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
S.C.P.A. Публичная Библиотека
7/XI-1922
Ասմարա, Мясникова
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Եկաւ որ քըշի մերին տաւարից.
Մերն էլ բարկացած նըրա հաւարից՝
Միքիչ կովերից գընաց, հեռացաւ,
Բուղադոռ տալով, նըրան մօտեցաւ.
Դեռ գոռգոռալով երկուսն էլ կըրծքից,
Հեռուից բարկացած կանչեցին իրար.
Վազելով եկան թուրքը, հայ օրէքից՝
Մեծ բուղակըռուին նայելու համար.
Խառնուել են միմեանց մէր, մանուկ ու ծեր,
Հրո-հրոի ձայներ, հայ-հուշ, դըղրդիւն.
Ամեն կողմերից լըսւում են հարցեր.
«Ո՞րն է երկուսից տանում յաղթութիւն»։
Երկու բուղէն էլ ահեղ զարկերով,
Պոզերով, ոտքով գետինն են փորում,
Երկու բուղէն էլ ուռած կըրծքներով
Հըպարտ բըչալով, կըռիւ են գոռում.
Մէկ պինդ ոլորած պոչն օձի նըման
Լախտ արած ուժգին գետինն են ծեծում,
Մէկ ինչպէս վերջին ահեղ հրաման,
Նորից հերսոտած կըռիւ են բըչում.
Սալմանի բուղի մընդաւը [1]) փըրփըրում,
Տեսնողի վըրայ սարսափ է բերում։

[1]) Ուսը

Ցանկարծ երկուսն էլ նայելով խեթ-խեթ,
Մէկ կոթ անելով [1]), գընացին յետ-յետ,
Մէկ նորից եկան պատրաստի զարկով,
Մօտեցան միմեանց դէմ ուռած կոդքով.
Մընդաւն ու պոզեր տալով պահապան,
Երկու ճակատներ դէմ ելան, կըպան,
Թըրմփք, հա, թըրմփք պոզերով, գանգով
Զարդում են իրար անխընայ զարկով։
Նորից խառնուում են թուրքեր ու հայեր,
Նայում են կռուին սըրտի տըրտմով.
Նորից թընդում են հրո-հրոի ձայներ
Եւ բուղաները զարնուում են թափով.
Փահլէվանի պէս հէնց պըտըտում,
Որ կուրծք ու ճակատ փըրփուր է պատում.
Դեռ չըրըխկում են, զըրըխկում զարկեր,
Սալմանի բուղէն յետ-յետ է նայում,
Կըրծքին ու կողին բացուել են վէրքեր,
Բայց նա ամօթից դեռ չի հեռանում։
«Զօռեց հա, զօռեց», յանկարծ գոռացին.
Սալմանի բուղէն զըրըխկաց գետին.
Մեր բուղէն էնպէս գոռաց ու բըչաց,
Որ նրա ձէնից սար ու ձոր թընդաց.

[1]) Պոզերով սպառնալով։

Իսկ բէկի յաղթուած բուղէն հեւելով,
Վեր կացաւ հազիւ, դընաց կաղալով։

Երբ մենք թուրքերին ծաղր ու ծանակով
«Ղոռ» էինք տալիս, թըքում ու մըրում,
Բէկը կոսըրուած մեր յաղթանակով
Նոր կըռուի համար ատամ էր սըրում.

—Էս բուղակըռուի ամօթի մըրից
Մենք չենք ազատուիլ ոչ մի ժամանակ,
Մինչև որ սխը չառնենք հայերից,
Մինչև որ չուտեն նըրանք դագանակ [1])։

Այդ ասած-չասած, խմբով թուրքերը
Կալմէջ արին մեզ դագանակներով.
Թըրերը հանած՝ հասան բէկերը
Եւ վըրայ տուին խիստ աղմուկներով։
Քար ու դագանակ ամենքի ձեռքին՝
Խառնուեցան թուրք, հայ, տղամարդ ու կին.
Երկու կողմերից կարկուտից վարար
Քարերով, փայտով ջարդում են իրար։

[1]) Մհակ։

Հէնց որ թուրքերը յաղթուած հայերին
Քըշելով, հասցրին արխալի [1]) ծէրին,
Ցանկարծ սարիցը մի ձէն որոտաց.
«Ո՞ւր էք փախչում, ո՛ւր, գետինը մըտած.
Մի՛ք վախիլ, տուէ՛ք, տուէ՛ք թուրքերին,
Գալիս եմ, որ ես պատժեմ բէկերին»։

—Փախէ՛ք, հա՛, փախէ՛ք, վա՛յ, կանչեց բէկը,
Աւադ-օրսկանն է սարիցը վազում.
Փախէ՛ք, հա՛, փախէ՛ք, մըտէ՛ք դագէքը,
Նըրա հետ կռուել մեզ էլ չի սազում։
Մի շունչ չը մնաց էլ դուրսը թուրքից,
Աւադն էր նըրանց դեռ կանչում դագից.
«Ո՞ւր էք փախել, ո՛ւր, էյ, դուք նամարդներ,
Դուրս եկէք, տեսէ՛ք ձեր հոդէառին,
Թէ չէ կը պոկեմ բինա-դագաներ,
Ձեմ թողնիլ մէկիդ շունչը բերանին»։

Թուրքերից ո՛չ մի խգիթ դուրս չեկաւ.
Սալմանի հայրը կորացած մէջքով
Եկաւ օրսկանի ոտները ընկաւ,
Ու նա հեռացաւ ծերի խընդիրքով։

[1]) Անասունների բացօթեայ հանգստեան տեղը։

Էն օրից էս օր Թուրքերն ամօթով
Հանեցին գլխից կըռուի մըտքերը.
Պատմում են Թուրք, հայ՝ ահ ու սարսափով
Աւագ-որսկանի արած գործերը.
Պատմում են որ նա ինչպէս զօրավար
Թիլիմը ունի չար դև ու սուրբից,
Որ նա չի լինիլ գընդակի աւար,
Ոչ էլ կը մեռնի նա մարդու ձեռքից.
Որ երկու բան է Աւագ-որսկանը
Ամենից մօտիկ պահում իր սրտին—
Մէկը Ղըրիմու հին հըրացանը,
Մէկն էլ մինուճար սիրուն Ալվարդին.
Ու ղըրանց հետը ժանտ օձի նըման
Եւ մի լուռ վիշտ է միշտ նըրան կըրծում,
Որ Աստուած տըղայ չը տուեց նըրան,
Որ Աւագ անունն պահէր իր ազգում.
Որ միշտ տեսնելիս սիրուն Ալվարդին
Զգում է նա իր դատարկ վախճանը
Եւ սև մըտքերը փաթաթած սրտին՝
Տանջում են նըրան դուրսը թէ տանը։
«Մի օր աղջիկս էս մարդու կը տամ,
Ինքս էլ ծերացած աշխահից կ'երթամ։
Հրացանս կը մնայ պատիցը կախուած,
Ժանգում ու փոշում անբան շաղախուած.

Երկար խանչալս էլ, արծաթով պատած,
Վախկոտի մէկը կ'առնի իր փողով,
Հազար փորձանքի արնով աշխատած
Անունս էլ հետը կը ծածկի հողով.
Սիրուն Գուդարքն էլ առանց պահապան,
Քանդելու կը գայ ամեն մի անբան.
Էլ չեմ դուրս գալ ես խոր գերեզմանից,
Էլ չեմ դըցիլ իմ հին հըրացանից»։

*
* *

Երկնքի դըրկում լողում է լուսին.
Դեռ նըստոտած են ծեր, երիտասարդ,
Աւագ-որսկանի, Ալվարդի մասին
Խարոյկի շուրջը լըսում են հանդարտ։
Կաղնի գերանը կըրակին ընկած՝
Առատ բոցերով դեռ լոյս է սփռում.
Ճարճատում է նա, բըռընկում յանկարծ,
Հետն էլ աշուղի երգերը վառում.
Տեսած ու լըսած անթիւ դէպքերով
Եւ մէկը միւսից արժան գործքերով
Դեռ երգում է նա և այն հաստատում,
Որ առաջինն է Աւագն աշխարհքում,
Նըրանից իգիթ, նըրանից հըսկայ
Էլ Թուրքում, հայում, ոչ մի տեղ չը կայ.

Եւ ուշի-ուշով նստոտած յամառ՝
Խնդրում են նորից տըղերքն աշուղին.
«Ա՛պի ջան, ապի, երգիր մեզ համար,
Էլ չենք քընելու մենք լուսնի շողին»։
Բոլորի ուշքն էլ որսկանը տարաւ,
Մարում են կամաց խարոյկի կայծեր,
Ջահէլ տըղերքը դեռ երգի ծարաւ՝
Աւելցընում են կըրակին փայտեր.
Ո՛ըը յոգնելուց գլուխը թեքած՝
Նիրհելով կամաց, զարթնում է յանկարծ,
Ո՛ըն էլ վաղուց է անուշ խըռռացնում.
Աւագ-որսկանին երազում տեսնում։
Երկնքի գրկում լողում է լուսին.
Ընկնում են արդէն ծեր, երիտասարդ,
Աւագ-որսկանի, Ալվարդի մասին
Լուսինն է խորհում երկնքում հանդարտ։

II

Արևը չելած սարուորն արթնացաւ,
Նորից ձորերում աղմուկ բարձրացաւ,
Նորից սայլի տակ ճըռռում է ճամփան,
Փըռփըռում հարսի քօղն ու զարթիպան.

Դալար իւրտերը ամպերի տակին
Աչքները գըցած քոչուորի ճամփին՝
Ժըպտալով յակինթ ցողերով առատ,
Կանչում են կարծես բոյրով անարատ։
Կանաչի վըրան հալթաւան [1]) ձեռքին՝
Կրօնամոլ թուրքը չոքեց նամազի,
Ձեռները զգոյշ տանելով միրքին՝
Աղօթք է անում Աստծուն մեկուսի։

Կէսօր է արդէն. կանաչ Լալուարից
Իջնում է հանդիստ ոչխարը կըթի.
Կըթուելով մաս-մաս, անցնում է բերից [2])։
Լսւում է անուշ փըշշոցը կաթի,
Հովիւ, հովուհի նստոտած շարքով՝
Կըթում են ուրախ և անհոգ խընդում,
Երբեմն էլ այրուած անուշիկ երգով
Սէր են զարթեցնում մէկ-մէկի սըրտում։
Վերջացաւ արդէն ոչխարի կիթը,
Կաթսաներ տարան թարմ կաթնով լիքը.
Մէկն էլ գըտակը շարժելով օդում,
Դեռ գառնարածին՝ «էկ, հէյ» էր կանչում.

---

1) Ջրամանի տեսակը։
2) Ոչխար կթելու տեղը։

Երկար չանցնելով, սարի գագաթին
Գառների կայտառ հօտը երևաց,
Խառնուելով նրանք մայրերի հօտին,
Բերկրանքի յոյզով մայում են ցրրուած.
Կանչում են, բայում գառը ու մաքին,
Անուշ ձայներով փընտրում են միմեանց.
Ո՛րը գրանելով իրան գառնուկին,
Կաթը է տալիս, փայելով սրրտանց.
Ո՛րը խաղում է մօր հետ կուշտ փորով,
Ո՛րն էլ մընում է տրխուր մայելով.
Եւ ամեն անգամ գառը մէր տալիս [1]),
Կարծես թէ անուշ համերգ են տալիս։
Բայց շուտ ջոկելով մայրերը գառնից,
Հովիւը քըշեց նըրանց դէպ՝ աքօտ,
Մըհակն էլ ուսին գառները բինից
Տարաւ գառնարած սառն աղբիւրի մօտ։

Հովիւ, գառնարած մի տեղ խմբուելով,
Լախտի են խաղում, առոյգ թռչկոտում.
Հըրճուում են նըրանց կայտառ խաղերով
Ծերերը, ծածկուած գառան մուշտակում.
Ամեն մի նըրանց ճարպիկ թըռիչքով
Ցիշում են վաղուց կորած մանկութիւն,

[1]) Մայրերին տալիս—ծծեցնելիս։

Շոյելով ճերմակ միրուքը ձեռքով,
Կանչում են՝ «Նամարդ, նամարդ ծերութիւն»։
Մէկն իր մուշտակը մի կողմն է գըցում
Եւ դիտմամբ խառնուում տըղերանց խաղին.
Մի լախտ է խըլում, ոլորում ձեռքում
Եւ առիթ տալիս անվերջ ծիծաղին.
Կանչում են՝ «Աթօ, լախտը թըռցըրու,
Մեր պապի մէջքը մի լաւ տաքցըրու»...

Մի տեղ ձիերը տըրտընդի տալով,
Փըռռացնում են, սարերը փախչում.
Ջահել տըղերքը քամանդ [1]) բըռնելով,
Նըրանց յետևից սիւրադ [2]) են թըռչում,
Մի խամ չընըստուած վայրի քուռակի
Ամեն կողմից կալմէջ են անում.
Ով նըրան մենակ բըռնի ու թամքի,
Նա մի քալաղի նամառ է տանում.
Բայց տաքացել է, կատաղել խամ ձին,
Տըղերանց վըրայ ծառս-ծառս է [3]) լինում.
Երկար քամանդը քաշելով վըզին,
Խեղդում են նըրան և թամքը դընում.

[1]) Ձի բռնելու պարան։
[2]) Ձիարշաւ՝ առաջ ընկնելու նպատակով։
[3]) Յետին ոտների վրայ կանգնում—ծառանում։

Զուռնան էլ թողած մի կողմը լախտին՝
Փչում է արդէն տաք-տաք ջիրիդին.
Տղերքը միմեանց առաջ են քաշում,
Ծերերը դարձեալ խոր ախ են քաշում։

Իսկ հարս ու աղջիկ սափորը ուսին՝
Գընում են խումբ-խումբ աղբիւրը ջրի,
Դողում են նրբանց ժըպտուն երեսին
Բոլոր գոյները Գուգարք լեռների.
Եւ բիւր ծաղկանիշ նախշուն շորերով
Անցնում են նրբանք ուղին հոտաւէտ
Եւ թարմ կուսական հըմայից բոյրով
Մըրցում են սարի ծաղիկների հետ։
Եռում է խաղը հարսների դիմաց,
Նայում են միմեանց աչքերի տակով,
Կարմրում են, ժըպտում կոյսերը կամաց,
Անցնելով անուշ սիրոյ տըրոփով։

Բայց, ա՛յ քեզ հըրաշք, մի շըշուկ անցաւ.
«Ալվարդն է գալիս, Ալվարդն է գալիս».
Եռուն ջիրիդը իսկոյն դադրեցաւ,
Բոլորն էլ սառան նրբան տեսնելիս։
Հուր-հըրին տալով քոչի արանքից,
Նրբա աչքերը հանեցին խելքից,

Էլ ո՛չ ջիրիդ կայ և ո՛չ էլ զուռնայ.
Ալվարդի նեռին ո՞վ կը դիմանայ.
Ջիրիդներն ընկան հուժկու ձեռքերից,
Ա՜խ ու հառաչանք թըռան կըրծքերից.
Զուռնան էլ մոռցած լախտն ու ջիրիդին՝
Նըրանց տեղ զըլեց այրուած բայեաթին [1]։

Ալվարդի համար ա՜խ են հառաչում
Գուգարք լեռների ամեն մի ձորից,
Ալվարդի համար մեղուն է թըռչում
ԼՕռուայ առաջին խամ մեղրի ծորից.
Ուտում են աչքով ամենքն Ալվարդին,
Բայց սէրն անյայտ է դեռ նըրա սըրտին.
Նա դեռ ապրում է երազների մէջ,
Դեռ նըրան այրել չի սէրը անշէջ.
Բայց էն էլ ասած՝ Աւագի ահից
Ո՞վ կարայ անցնել Ալվարդի մօտով,
Կամ թէ փախցընել Նըրան աղբիւրից
Ո՞վ կարայ իսկի անցկացնել մըտքով։

***

Սև ստուերները հըսկայ լեռներից
Ձորերն են ընկել, մէկ-մէկի դըրկել,

[1]) Սիրոյ երգի տխուր եղանակ։

Լուսնի եղջիւրը մըռայլ ամպերից
Հալածուած դէմքը դեռ չէր աղատել.
Թանձրը եթերեան սև քօղը դէմքին
Վազվըզում էր նա յոգնած ու անքուն,
Նայելով հերթով բոլոր օրէքին,
Հըսկում էր նըրանց գիշերը արթուն.
Օրօր էր երգում առուն ձորերում;
Մարում էր մէկ-մէկ կըրակն օրէքի,
Բայց ականակիր սարի խաւարում
Մենակ մի կայծ էր դողում ճըրագի.
Ղարախաչ [1]) սարի գիժ գագաթներին
Լուսինն էլ գերի մընաց ամպերին.
Այնտեղ ծովիանն է խաղում, որոտում;
Հըրեղէն գօտին երկնքով պատում։
Շըփշըփաց անձրև. ամեն մի տեղով
Առուներ դառան պըղտոր հեղեղով։
Զարթնելով քընից սարուորը յանկարծ,
Ամրացրեց դագի հին ծակ ու ծուկը.
Տաւար ու ոչխար իրարով ընկած՝
Խառնեցին միմեանց գառն ու հորթուկը.

[1]) Լոռուայ և Երիակի սահմանում ձգուած բարձր սարը։

Հովիւը հասաւ աղդարար ձայնով
Հաւաքեց նըրանց դէպի արխալը,
Բայց դեռ լըսւում էր տըխուր ոռնալով
Դօլանից [1]) փախած շընների հաչը։
Սարեր ու ձորեր ահից դողալով,
Արձագանք տուին փայլակ-կայծակին,
Լեռների որդին մըթին գիշերով
Անցնում էր հեղեղ՝ մի սև ձի տակին.
Գոռում էր, ճըչում ահաւոր կիրճում
Փըրփըրած բաշով սևացած ուրկուն [2]),
Բայց ձիաւորը մի աղօթք մընքում
Դեռ մըրմնջալով, քըշում էր անքուն։
Ձին առանց զարդի, սանձի ու թամբի
Ցատկում էր արագ ժայռերի վարսեր,
Ինչպէս մի ստուեր սևակնած ամպի
Թըռչում էր գետեր և դար ու փոսեր.
Իսկ դովիւները պինդ սմբակներից
Արձագանք տալով խորին ձորերում;
Կայծին են տալիս զարնուած կայծքարից,
Փայլատակում են և յանկարծ մարում։

[1]) Շան նստելու և հօտին հսկելու տեղը։
[2]) Հեղեղից առաջացած մեծ գետ։

Ուրնդներից ամպի փրփուր է հոսում,
Թառնուում է պըղտոր, վըշշան հեղեղին.
Ձին իր հեծուորին այնպէս էր սաղում,
Ինչպէս որ նեռը իրան աղեղին։

«Էս ուրկունիցն էլ թէ դուրս թըռաւ ձիս,
Մուրաղ եմ անում գընամ Սուրբ-Սարգիս.
Հասուէհաս եմ հա՜, ճըրագ եմ տեսնում,
Դիշերս կը մնամ հայերի բինում։
Հէնց որ անձրևը միքիչ դադարի,
Նորից կը բըռնեմ ճամփէն Լալուարի»։
Աչքերը յառած բինի ճըրագին,
Հեծուորն էր այդպէս ձիուն մտմնջում,
Նըրա սև բաշը ոլորած ձեռքին,
Կարծես ուզում էր հասնել մի շնչում։
Փըռռացրեց սև ձին, դոփեց սմբակով,
Նետի պէս ցըցուեց արխալի ծայրին.
Մի շուն դօլանից վեր թըռաւ հաչով
Եւ թարշարժ արաւ ըընից սարուորին.
Շընները աղմուկով զայրացած հասան,
Այն ձիաւորին կալմէջ արեցին.
Իսկ հովիւները՝ «ո՞վ ես» ու «ք՞իմ սան»,
Նըրան խաւարից մէկ-մէկ ձայնեցին։

—Մըթին դիշեր է, կորցրել եմ ճամփէս,
Պատասխանեց նա, ղօնաղ եկայ ձեզ։

Ուլթասունից մօտիկ վեհ բարձրահասակ,
Հերքը ալևոր, ձիունից էլ ճերմակ,
Արծաթապատեան դաշոյնը գօտին,
Հին արկածների կընճիռներ դէմքին,
Սև-մազ եափնջին ուսերին բազմած,
Երկար չիբուխն էլ բերանին սեղմած,
Կանգնելով ծերը ալաչխի շէմքին՝
Խրոխտալի ձայնով կանչեց ճամփորդին.

«Ե՛կ, ճամփորդ ախպեր, արխալի մօտով,
Դուրսը անձրև է խառը կարկուտով.
Մինչև չը նստես դու էլ իմ տանը,
Պատառ չեմ դընիլ ես իմ բերանը.
Ե՛կ, ախպէր ջան, եկ, ղօնաղն Աստծունն է,
Անմեռ աշխարհն էլ իգիթ մարդունն է»։

Հեծուորը եկաւ ծերի հրաւէրով,
Սև ձին էլ տակին սև ամպի նըման,
Ուռած ուրնդներից թառանչ քաշելով,
Թըռաւ ու կանգնեց նըրան յանդիման։

—Բարի երիկուն, ասաց նա, սարուոր,
Վատ օր չը տեսնի դըլուխդ ալուր.
Թող վառ լինի միշտ բինում ճըրագդ,
Թող տափը չառնի վերջին դընդակդ։

«Բարին արևիդ. համեցէք, որդի,
Թող ձիդ օրիւկի [1]) հանդումը ծառան,
Դու եկ անձրևից ալաչուխ մըտի.
Ալվարդ ջան, վեր կաց դու էլ տաքարան,
Որսի խորոված շամիրի, պատրաստի,
Կուշտը սովածին մանըր կը բրդի»։

Այդպէս պատուէրներ տալով Ալվարդին,
Ալաչուխ տարաւ ծերը ճամիրդին,
Որի եավնջից ծորում էր ջուրը,
Ինչպէս մամռոտած ժայռից աղբիւրը.
Բայց նա թափ տալով շորերը շէմքին,
Մօտեցաւ, նստեց ծերունու կողքին։
Թուրն ու դաշոյնը կեռ արծաթապատ,
Գընդակ-վառօդի ամանը գօտին,
Զախմախի հրացան զուգուած տասնաբանդ,
Շահմար [2]) օձի պէս լուռ փարուած մէջքին,

[1]) Արածելու համար կապել երկար թոկով։
[2]) Օձերի մայր-թագուհի։

Զէնք ու զրահում, արծաթում մըտած՝
Ճըրագի լոյսով հիւրը շողշողաց։

Սերն ու կարագը առաջ բերելով,
Ալվարդն եփում էր դեռ տաքարանը.
Մի քանի խօսքով սուփրէն օրհնելով,
Ծերունին դարձաւ աղօթարանը.

«Թող նըրան տանի սելաւն ու գետը,
Ո՛վ աղուհացի օրէնքն ուրանայ,
Ո՛վ զօնաղ եկած թըշնամու հետը
Չի նստիլ ուրախ մարդի-մարդանայ.
Թըշնամի կըլնես թէ ինձ բարեկամ,
Դուռս բաց կըլնի քեզ ամեն անգամ.
Քանի որ կ'ուզես իմ ալաչուխում
Սիրդ բաց արա, ինձ հետ կեր ու խում»։

Երբ շամիրները մէկ-մէկ շարելով,
Դարսում էր կոյսը կարմրած շեղջին,
Կամ խորոված արագ շրջելով,
Բերում էր, դընում հիւրի առաջին,
Ցոլուն աչերը յօնքերի տակից
Ընկնում էին միշտ փայլուն զէնքերին

Եւ ալեծածան մաղի արանքից
Նա դաղտնագողի գիտում էր հիւրին։
Խիտ դանդուրները յանկարծ ցընցուելով,
Մերթ այտերն էին վարդի պէս փայում,
Մերթ շամիուրները նորից շարելով,
Հիւրի սիրան էլ էր նա հեռը այրում։
Ե՛ւ անբընութիւն, և՛ երկար ճամփէն
Վերացան իսպառ ճամփորդի մրաքից.
Սև-սև աչերը շանթելով արդէն,
Անցան շեշտակի սուր նըրա կըրծքից.
Մոռցաւ ինքն իրան, երկիր ու երկին,
Երերաց անուշ, անսովոր դողով,
Եւ կեանքի գընով գողցած նըժոյգին
Նա մոռցաւ միայն երկու աչերով։

Ցեանելով հիւրի թեւի արիւնը,
Ծերունին հարցրեց նըրա անունը.
«Ինչի՞ չես, որդի, գարդդ ինձ ասում,
Էդ ինչ արիւն է թեւիդ հոսում.
Ե՛կ, դու մի ծածկիր, անունդ ինձ բախշի,
Չեմ թողնիլ որ քեզ էդ ցաւը մաշի։
Աւագ-որսկանն եմ Գուգարաց երկրի,
Կըռիւների մէջ հերքս ճերմակած,

Քեզ նըման ես էլ հազար վէրքերի
Խոռոչներ ունեմ մարմնիս ընկած»։

—Ցէրն Ինքը հաստատ պահի քո տունը,
Վաղուց եմ լսել քո մեծ անունը.
Զախ թեւիս միջին գընդակ է մնացել,
Ի՞նչ անես, ախի, դըժուար է հանել։

«Ա՛նհոգ կաց, որդի, ինչ վէրք էլ լինի,
Ա.ղիկս նըրան դեղ ու ճար կ'անի։
Նա սովորել է հանգուցեալ մօրից,
Որ բըժըշկում էր գընդակ ու սըրից։
Ալվարդ ջան, աղջի, ճար ունես, դէ տես.
Ջահել է, մեղք է, կրոնատ [1]) չը թողնես»։
Եւ Ալվարդն եկաւ դեղի փաթեթով,
Գընդակը հանեց մի երկար կարթով.
Վէրքը նա լուաց, դեղը փաթաթեց,
Վրան էլ մետաքսի թաշկինակ կապեց.
Իսկ հիւրն Ալվարդով ամնքան հիացաւ,
Որ գընդակ ու ցաւ իսպառ մոռացաւ։

«Դէ, պատմիր, որդի, գըլխիդ անցուանքը,
Թէ որտեղ հասաւ քեզ էս փորձանքը»։

---

1) Առանց թեւի։

—Ա՛յ, ապի, լսիր սրբոտիս գաղտնիքը,
Ո՛չինչ չեմ ծածկիլ, կը պատմեմ անվախ.—
Եւ հիւրն արիւնով աչքերը լիքը
Դեռ վագրի նըման նեռեց աջ ու ձախ.
—Բայց առաջ բախշի ինձ, Աւագ-օրսկան,
Որ ինձանից գող՝ թուրքեր էլ չը կան.
Իսկ թէ քեզ մօտ էլ դուրս գամ մեղաւոր,
Ինձ համար եղիր դու խիստ դատաւոր։

«Իզուր ես եկել, մըտել իմ տունը,
Ինձ մօտ չես գըտնիլ քո փըրկութիւնը.
Հոգիս էլ կը տամ ես իմ զօնաղին,
Բայց չեմ խընայիլ, պաշտպանիլ գողին։
Դիշերս կը տամ ես քեզ ապաստան,
Կը զարթեմ ըընից, կ'երթաս ապահով,
Յետոյ կը փընարեմ ես ինչպէս օրսկան
Եւ կ'անեմ մի օր քեզ գընդախորով։
Դէ, պատմիր, տեսնեմ՝ էդ ինչ ահարկու՝
Սարերը ընկած աւազակ ես դու»։

—Դարուն էր, ապի, սարը քոչելիս
Մի քանի հարուստ թուրք աղալաներ՝
Աղբիւրի ափին նամազ անելիս,
Օրիւկել էին իրանց ձիաններ։

Երբ ես անտառից յանկարծ դուրս եկայ,
Նըրանց միամիտ բարով տուեցի.
Նըրանք ծաղրեցին և հըռհըռալով
Հարցըրին ինձ.—Հայ, ձու գողցար թէ ձի։
Էն օրից թէև տարիներ անցան,
Բայց նըրանց ծաղրը մընաց իմ սըրտում;
Եւ ես երդուեցի էն ծաղրի թոյնով
Լինել աւազակ, գող ու մարդասպան.
Գիշերը անցնել թուրքերի բինով
Եւ մահ դոռալով քըշել ամեն բան։
Հէնց էն ինձ ծաղրող մեծ աղալարին
Գիշեր ու ցերեկ փընտրելով արթուն,
Վերջը ես գըտայ Ղարախաչ սարին,
Ուր նա յայտնի է ինչպէս մեծատուն։
Ասլան-բէկն է նա, քաջ և անուանի,
Տաւար-ոչխարի հօտերով հարուստ,
Բայց ամենից լաւ մի սև ձի ունի,
Որ աշխարհ արժի մենակ արտաքուստ.
Չի հասնիլ նըրան հին հէքեաթների
Թէկուզ հըրեղէն ձին իր թևերով,
Չի հասնիլ նըրան և գընդակների
Կարմիր տըժժոցը մըռայլ գիշերով.
Առաջուց գիտի նա՝ թէ փորձանքը
Եւ թէ հեծուորի սըրտի բաղձանքը։

Մութին գիշեր էր, հէնց գողի գիշեր,
Երբ Ասլան-բէկի օրին մօտեցայ.
Հէնց որ օրիւկը բէրից կըտրեցի,
Վեր կացաւ յանկարծ մի շուն դօլանից,
Երկաթի ոտկապն էլ որ կոտրեցի,
Դըղըրդաց օրէն հարայի ձէնից.
Մարդիկ վազում են, շները հաչում,
Բայց ես փորըսող գետնին եմ կըպչում,
Եւ հարահրրոցի թունդ տրաքտրաքոցին
Թըռչում եմ, սանձում ոտկապով սև ձին։
Նորից դըղըրդաց, դընդակ որոտաց.
«Տարան հա՜, տարան բէկի սեւուկը».
Բայց ես նեռի պէս ականջը մըտած՝
Քըշում եմ նըրանց գոված նըժոյգը.
Տըրաք հա՜ տըրաք դընդակներ թըռան.
Խառնըւած օրէն գոռում էր. «Տարան,
Հասէք, հա՜, հասէք, դեալի-էրմանին
Կենդանի թաղեց իգիթ Ասլանին»։
Խըրխընչում էր ձին, ոտկապը կըրծում,
Փրփուրն ամպի պէս ռընդներից դըցում
Եւ կըրակ կըտրած էնպէս էր վազում,
Որ կ'ասես հեռուից դընդակ էր բըզզում։
Թէ որ ես նըրան հեծած չըլնէի,
Ով գիտէր թէ ողջ էստեղ հասնէի։

Ցանկարծ դըրոյցը Կարօն կըտրելով,
Դիմեց որսկանին այսպէս խընդրելով.
—Հերիք է, ապի, ես լոյսն եմ ընկնում,
Տաւար ու ոչխար արօտ են գընում։
Թէ նամարդ եմ ես, զարկիր դընդակով,
Թէ չէ ճամփայ տուր ինձ քո օրհնանքով։

«Համբերիր, Կարօ, համբերիր մի քիչ,
Մի օր էլ կըլնես թոյլերի փրկիչ.
Էս գիշեր պատմած դըլխիդ անցքերը
Մոռցըրին ծերիս ճերմակ հերքերը.
Թէ դող լինէիր թուրքի պէս անմիտ,
Ես չէի ասիլ քեզ երբէք իգիթ.
Բայց երբոր գող ես մենակ թասիբից,
Էն էլ նամարդին պատժելու համար,
Օգնութիւն կը գայ քեզ ամեն սուրբից
Եւ դու կը լինես անյաղթ զօրավար.
Մարդը նամարդին թէ մէօհտաջ[1]) կ'անես,
Աւադ-որսկանից պատիժդ կ'առնես։
Դէ, տուր խանչալդ, օրհնեմ իմ սրբով,
Որ քեզ տեսնելիս դողայ թըշնամիդ,

---

1) Պարտական։

Քեզ պէս թասիբի աւազակներով
Լցուեն մեր երկրի սար, դաշտ ու հովիտ»։

Ծերը պատեանից դաշոյնը հանեց
Եւ խաչ քաշելով Կարոյի սրբին,
Պապական ծիսով նա քաջին օրհնեց.
Ապա օրիւկից նրբա ձին բերին
Եւ Կարոն թրռաւ առոյգ ոստիւնով,
Կրպաւ մերկանդամ սեւուկի մէջքին.
Խրրինջաց սև ձին ու փրռնչիւնով
Թրռչկոտաց հուժգու հեծուորի տակին։
Եւ սիրտն ու հոգին թողած Ալվարդին,
Կարոն՝ ճնաս բարով ասաց Աւագին։

Ծէգում էր արդէն, էլ Կարոն չը կար.
Ալվարդը գընաց՝ ինչպէս խելագար,
Ալաչուխ մըտաւ, սափորը ուսեց,
Երգի մըրմունջով աղբիւրը վազեց։
Ջիու հետքերը յանկարծ նա գըտաւ,
Այնտեղից պոկեց մի փունջ կանաչ խոտ
Եւ համբուրելով նրբա մէջ դրաւ
Կարոյի թողած գընդակը արնոտ։
Բայց խոր ձորերում կամաց մարելով,
Դեռ զրընգում էր պայտերի դոփիւն,

Նրբան երբեմն արձագանք տալով,
Ջուլլում էր երգի անուշիկ հընչիւն.
Ալվարդն էլ յենուած դեռ ժայռին, դաղտնի՝
Կարծես ուզում էր երգողին գըտնի։

Լալուարայ բարձր սարից
Շատ սիրուն է աշխարհը.
Ամպի տակի աղբիւրից
Ջուր է տանում իմ եարը։

Աղբիւր, ծաղիկն ու լալը [1])
Շատ առատ են Լալուարին.
Բայց իմ սիրած մարալը
Արժի արար-աշխարհին։

Ա՜խ, էն աղջիկն աչք-ունքով
Ինձ զարկել է գնդակով.
Ջուր է թռչում իմ սև ձին,
Սիրտս կրպաւ Ալվարդին։

Էլ մի թռչիր, ձիաւոր,
Արծուի պէս թեւաւոր.

---

1) Հանք։

Ե՛տ արի, ետ Լալուարը,
Մենակ մընաց մարալը։

*
* *

Աւագ-որսկանը, հայրը Ալվարդի,
Զիրուխը բերնին դեռ նըստած արթուն՝
Ցիշում է մըտքում կեանքը որսորդի,
Դիտելով ծուխը գիշերը արթուն.
Եւ արիւնաներկ ծեր յիշողութեան
Ամեն մի մոռցած, կորած անկիւնում
Սև ծըխի մըռայլ ամպերի նըման
Անցած օրերն են մէկ-մէկ բարձրանում.
Իսկ ալաչուխում պառկած առանձին
Գըլուխը բարձին թեքել է Ալվարդ,
Քնի մէջ կարծես թռել է հոգին
Մի աշխարհ՝ անվերջ անուշ ու անդարդ։

Մարել են ճրագի կայծերը աղօտ,
Նընջում է ամբողջ օբէն մըրափած.
Ցանկարծ հեռուում թընդաց մի որոտ,
Խոր քնից իսկոյն Ալվարդը զարթած,
Աչքերը յառեց ծերունու դէմքին
Եւ յուզուած պատմեց երազ անմեկին.

«Քընած էի ես, տեսայ երազում
Մի սիրուն պախրայ անտառից վազեց,
Մեր կովերի հետ կանգնած արխաջում
Աղաքարերից մի քիչ աղ լիզեց.
Նա պոզեր ունէր մէկ-մէկի վըրան
Անտառում բըսած ծառերի նըման.
Ինչպէս մի ընկեր կարօտած սիրով,
Եկաւ փաթաթուեց, փարուեց իմ շորով.
Բայց մէկ էլ տեսայ ապիս բարկացած,
Հրացանը լցրեց, դարձաւ դէպի մեզ.
Ես էլ վեր թըռայ տեղից վախեցած,
Կանչեցի նըրան, խընդրելով էսպէս.
Մ՛ոլի ջան, ասի, մի սպանիր պախրան,
Թող, բըռնել եմ ես որ պահեմ նըրան.
Ապիս չը լսեց. խեղճ պախրան ընկաւ,
Կ՛ասես թէ գընդակն իմ սրտովն անցաւ»։

Վերջն այսպէս խօսեց խոր յօրանջելով,
Հարևան բինի մի պառաւ կընիկ,
Որ թափանցել էր, դարի գըցելով,
Մեծ երազների խորհուրդ ու գաղտնիք.
—Երազն է անվերջ մի սիրուն աշխարհ,
Ուր միշտ ապրելով ինչպէս ոգիներ,

Կարօտ սրբաները գընում են իրար,
Շընչում են անուշ, թափում արցունքներ։
Լըսում եմ, Ա՛լվարդ, սրբոտիդ տըրտփից՝
Դու դեռ դողում ես մահուան սարսափից.
Ո՞վ է բաժանել կեանքը երկուսի,
Ո՞վ է խանգարել հանգիստը կոյսի։
Գընդակ ու պախրայ, լացը կուսական
Խաղեր չեն եղել անհոգ մանկական,
Այլ մարմնից ազատ երազի ոգին
Գուշակել է քո մըռայլ ապագան.
Ե՛ւ տանջանք է նա պատրաստում կըրծքին,
Ե՛ւ խոստանում, թէ լաւ օրեր կը գան։
Կ՚ազատուես, Ա՛լվարդ, դու չար փորձանքից,
Թէ պախրայ չընկնի հօրդ գընդակից»։
Եւ Ալվարդն այդպէս պառաւից լըսեց,
Որ այն երազից ցաւ չը կայ իրան.
Երազահանն էլ ծերին համոզեց,
Որ այնուհետև օրս չանի պախրան։

*
* *

Խոր ձորի միջին, մի ժայռի կըրծքից
Աղբիւր է բըղխում ուրախ քըչքըչան.
Նըրա ձայները անուշ բիւր երգից՝
Սարեցու համար վաղուց սրբացան.

Սիրոյ-աղբիւր է նա հընուց ասուել,
Սիրուն կոյսեր են միշտ նըրան ուխտել,
Եւ գուշակել է ջըրի ելևէջ,
Թէ ով երջանիկ կըլնի սիրոյ մէջ։
Դարերից ի վեր աղբիւրը հոսում,
Դեռ սիրոյ մասին երգեր է հիւսում;
Եւ գըլգըլալով ձմեռ ու ամառ,
Դեռ նա երգում է սիրելու համար։
Գնում է Ալվարդ դէպ՝ սիրոյ-աղբիւր՝
Իրանց տան համար տանելու պաղ ջուր։
Հանելով ձորը մի նեղ կածանով,
Դեռ ծաղիկներ է նա շարում կըրծքին
Եւ դիւրումներից մեղմ անուշ ձայնով
Երգում է սիրոյ-աղբիւրի ափին.
Սարերն էլ նըրան ուրախ քըրքիջով
Արձագանք տուին ժայռերի միջով.

«Աղբիւր, աղբիւր, ջան աղբիւր,
Ջուրդ գըլգըլան աղբիւր,
Վարդը բացւում է բոյրով,
Սէրն ապրում է համբոյրով.
Թէ որ գընես իմ եարին,
Մոմ կը վառեմ քո քարին»։

—Ալվարդ, Ա՛լվարդ, ջան Ալվարդ,
Բիւլբիւլն երգում է անվարդ.
Հեռուից տանջուած քո սիրով
Դեռ կրկնում են հուր-սրրով.
Բայց ամենից՝ աշխարհում,
Գող Կարօն է քեզ սիրում։

«Աղբիւր, աղբիւր, ջան աղբիւր,
Ջուրդ գլգելան աղբիւր,
Վա՜յ թէ ապիս իմանայ
Ու մեզ վերայ բարկանայ.
Եթէ Կարօն ինձ տանի,
Վա՜յ թէ Նբրան ըսպանի»։

—Ալվարդ, Ա՛լվարդ, ջան Ալվարդ,
Բիւլբիւլն երգում է անվարդ,
Թէ որ մեռնէք երկուսով
Աշխարհի մէջ նամուսով,
Սիրոյ շէմքում ձեր ճըրագ
Վառ կը մընայ անկըմակ։

—

Աղբիւրի ափին Լալուարի կոյսին
Կարօն սիրել է սափորը ուսին.

Թէկուզ և զարկեն գընդակ մահացու,
Կարօն ընտրել է Նբրան հարանացու։

III

Ուր սուր ծերպերով ահեղ ցիրուցան
Լեռներն են բազմած բընութեան արձան,
Ուր թուխ ամպերն են գունդագունդ զինուում,
Փայլակ-կայծակով իրար հետ կրուում՝
Զարներով միմեանց երկիր ու եթեր,
Թրռչկոտում են հուր կայծակի շանթեր,
Խաղում են, գոռում ճայթիւն որոտով,
Ծեծում լեռներին, ծաղրում կարկուտով։
Այնտեղ գիշերուայ խաւարի մէջին
Մի խարոյկ վառուեց Լալուարի լանջին.
Ձորերի քաջեր որսի են եկել,
Կրակի շուրջը շարքով նըստոտել.
Ոմանք շըտկում են շողշողուն զէնքեր,
Կարմիր բոցերից փայլում են դէմքեր,
Ոմանք խորովում են եղնիկ կամ վարազ
Երկար ճոզերով շեղջի վրայ շարած,
Եւ լուռ նըստոտած եռվինջի տակին՝
Շարունակ լարուած լըսում են մէկին։

Ինչպէս խոր ձորում գընդակ ու վառօդ՝
Թընդում է մէկի ձայնը կըրակոտ,
Այնպէս է գըլխի անցուածքը պատմում,
Կարծես Լալուարին ամպ է որոտում:

«Անցնելով հազար արիւն-փորձանքից,
Մահուան հետ ընկեր-ախպէր եմ դառել,
Նամարդ չի պըրծել դեռ իմ գընդակից,
Գըլխիս մազի չափ որսեր եմ արել.
Դեռ այժ ունեմ ես վագրից առաւել,
Գընդակս էլ որսից խակի չի շեղուել.
Բայց աղջիկս արդէն տեսաւ երազում,
Որ որս անելը էլ ինձ չի սազում:
Ես էլ ուխտում եմ արիւն չը թափեմ,
Այլ ջահէլներիդ համար աղօթեմ,
Որ դուք էլ գընաք իմ թողած հետքով,
Պահէք աւանդը մեր սուրբ պապական,
Մէկն իր կատարած արժանի գործով
Իմ տեղը լինի նոր Աւագ-որսկան»:

Զարմացած ծերի վերջին խօսքերով՝
Տըղերքը դարձան նըրան հարցնելով.
—Քեզնից ձորերում՝ գող-մարդասպան
Դողում են, մարդիկ, հարամի, գաղան.

Ով որ գընդակիդ ձէնը լսում է,
«Աւագ-որսկանն է էլի», ասում է.
Թէկուզ դու լինես հարիւր տարեկան,
Ո՞վ կարայ լինել քեզ նըման որսկան:
«Մի շաբաթ էլ կայ դեռ Վարդավառին,
Որ սար ու ձորից ուխտ գան Լալուարին.
Երբոր էն օրը գան ծեր, պատանի,
Թող ով որ քաջ է՝ նամառը տանի:
Մինչև որ անցնեն էս չորս-հինգ օրը,
Տակն ու վրայ արէք դուք սարն ու ձորը.
Ով որ մեծ որսով կը գայ Սուրբ-Սարգիս,
Նա էլ կը լինի ժառանգն Աւագիս»:

Երբ գիշերը անց, հէնց լուսադէմին,
Խօսքը վերջացրեց Աւագ ծերունին,
Տըղերքը մեծ-մեծ որսերի յոյսով
Պարկ ու հրացան գըցեցին ուսով.
Ո՛րը սարերին, ո՛րը ձորերում
Հրացանը ձեռին որս է որոնում:
Մի տեղ եղնիկն է անմեղ բառաչում,
Մի տեղ պախրան է յանկարծ հառաչում:
Մի տեղ էլ արջին որջից հանելով,
Կըռւում է մէկը իր սուր խանչալով:

Գազանը տալով որսորդին ապտակ,
Դեռ պաշտպանում է նրա սրի տակ.
Վայրի վարազը սրլեհը [1]) սրրած՝
Մացառն է նետուել ռեխը փրփրրած.
Նորից գընդակ են հրացանը լցնում,
Նորից վազելով եռևից հասնում:
Եւ որս ու որսկան սիւրաղ ընկնելով,
Խեղդում են շատին շան վոհմակներով.
Ոմանք էլ լօքում, լիճկապ են անում
Եւ փախածներից նորից կոտորում:

Ամեն տեղ գընդակ, կրակ, որոտում;
Բայց ինչի՞ Կարօն որս չէ պատրաստում:
Նա թափառելով հրացանը ձեռին,
Դեռ նոր էր գըտել մի յարմար դարան
Եւ մըտածելով իր որսի մասին,
Լուռ գանգատւում էր բախտից ինքն իրան.
«Ես էլ եմ ուզում գընալ Սուրբ-Սարգիս,
Ես էլ եմ ուզում տեսնել Ալվարգիս»:
Բայց ինչ արած որ դեռ նըրա բախտից
Որս չը գուրս եկաւ էն առատ հանդից:

[1]) Ժանիքը:

«Էրնէկ անմուրազ էս ձորում մընամ;
Քան թէ ես դատարկ Լալուարը գընամ»:

Ուր առուակները մանուկ կարկաչով
Դիմում են ձորեր, լըցնում հառաչով,
Ժայռերից ժայռեր թափ առած, ոյժով,
Թընդիւն որոտով փրփրում է ջըրվէժ,
Մըռուրթը կիտած հին ապառաժով
Ջարդուելով անյոյս, երգում է վըրէժ.
Ուր զեփիւռ մեղմիկ ցըրուելով բոյրը,
Սուզում է սիրտը վայելքի ծովում;
Իսկ թարմ շուրթերի կոյսի համբոյրը
Ծաղիկների հետ անմեղ բարեւում:
Ուր զգացումն է բըռընկում հուժկու,
Աղաւնուցը հեզ, արծուից ահարկու,
Որսի հըրաթափ գընդակի թըռիչ,
Ջըրվէժի վայրի երգը ձորերում;
Ամեն մի հընչիւն, անուշիկ, թովիչ,
Անցնում է սիրտը նըրանով փարում;—
Այն կամարի տակ անսահման կապոյտ
Լալուարն է զարթում հարսի պէս անփոյթ:
Գուգարքի հրսկան բարձրը եթերից,
Գըլուխը հաղիւ հանած ամպերից՝

Ժըպտում է, խնդում փոքրը լեռներով,
Որպէս ծերունին իրան թոռներով։
Այսօր նա ժըպիտն անուշ ճակատին՝
Ամպ-երեսկալը դըցած երկնքով,
Զուգւում է ուրախ Սուրբ-Սարգսի ուխտին
Գուգարք աշխարհի զարդ ու պըճրանքով.
Իսկ նըրա բարձրը դալար գագաթին
Անշուք քարեկոյան առանց տանիքի,
Հին սուրբ խաչքարը բաղմած քարափին՝
Գրաւում է սիրտը ուխտաւոր բինեքի.
Սար, դաշտ ու հովիտ անթիւ ցիր ու ցան,
Փըրփըրուն գետեր, դալար անտառներ
Մի նուիրական նեղ, մոլոր կածան
Այնտեղ է տանում բոլոր բինաներ։
Ասում են՝ ով որ միշտ վառ հաւատով
Դալիս է Լալուար որևէ ուխտով,
Խնդրում, աղերսում քաջ Սուրբ-Սարգսին,
Հասնում է անշուշտ սըրտի մուրազին.
Եւ թէ մարդ, թէ սար, ժայռ ու ըլլուր,
Ցաղթուած գըլխներով խոնարհուելով լուռ,
Գալիս են նըրա զօրութեան ծառայ,
Որպէսզի հասած ցաւը վերանայ.
Ոմանք հասնելով ըրրտինքն երեսին,
Հանգստանում են Լալուարայ ուսին,

Ոմանք էլ հեռուից երկար շարքերով
Աչքները յառած դէպի սուրբ սարը՝
Գալիս են բարձուած հազար մեղքերով,
Որպէսզի գտնեն փրկութեան ճարը։
Արդէն ջերմեռանդ ծեր, պատանի, կին՝
Հազար դունաւոր դդեստներ հագին,
Մատուռի շուրջը խունկ ու մոմերով
Պըտոյտ են գալիս բոբիկ ոտներով։
Բերել են այնտեղ և՛ հիւանդներին,
Ե՛ւ խաչ-փաթաթուկ [1]) թոյլ ընկածներին.
Ո՛ըը մի ցաւից, կամ չօրից տըկար
Ընկել է կըծկուած սուրբի ոտները,
Ո՛րն էլ ուշաթափ մօրուց ցաւագար
Իրար է զարկում պինդ ատամները,
Բերանը փրփըրած՝ տանջւում չարաչար,
Քաջ զօրավարից աղերսում մի ճար.
Եւ մուրազներով՝ թըշուառ, բախտաւոր,
Մոմեր են վառում սուրբ խորհրդաւոր։
Մի տեղ ուխտաւորը նըստում է ճաշի,
Մի տեղ դընում են կոխին [2]) թամաշի,

---

1) Խաչի պատժած անդամալոյծներին։
2(Գոտեմարտ։

Մի տեղ խընձորը նըշան են խըփում,
Մի տեղ մատաղը դեռ նոր են եփում,
Մի տեղ աշուղը լի սուփրի ծէրին
Բազմած, խըփում է սազի սիմերին.
Մերթ իգիթների գործերն է գովում,
Մերթ նամարդների սիրտը նըզովում.
Մի տեղ նաղարան զըլում է պարին,
Զուռնա-բայեաթին կանչում է եարին.
Մէկը տեսնում է իր նըշանածին,
Մէկը նըշանում մըտքում սիրածին.
Մի տեղ էլ անմեղ կուսակին սըրտեր,
Ըզգալով սիրոյ առաջին շանթեր,
Ձեռք-ձեռքի տուած երգում են, պարում.
Ամենքի դէմքին ժըպիտ է փայլում։

«Մուրազատու ով Սուրբ-Սարգիս,
Դու պահպանիր մեզ ամենքիս.
Ամեն տարի պաս ու ծոմով
Մենք ուխտ կը գանք խունկ ու մոմով
Եւ ծունկ չոգած մենք Լալուարին՝
Աղօթք կ'անենք զօրավարին.
Զահէլ-ջիւան մեր սիրածին
Հասիր որսի դըժուար ճամփին.

Հասիր նըրան, որ նամուսով
Շուտ գայ Լալուար մի մեծ որսով։
Մանուկ ու ծեր քարեր գըրկած՝
Աղաչում ենք ոտդ ընկած.
Ցաւերը տուր սար ու քարին,
Անուշ մուրազ՝ սիրած եարին.
Մուրազատու ով Սուրբ-Սարգիս,
Դու պահպանիր մեզ ամենքիս»։

Իսկ այնտեղ խմբով անուանի քաջեր
Ձէնք ու զըրահըգըցած ուսերով՝
Բերել են եղնիկ, եղջերու, արջեր
Եւ պարծենում են իրանց որսերով.
Բայց յանկարծ լըսուեց կանացի հառաչ,
Մի խումբ աղջիկներ վազեցին առաջ
Եւ հեկեկալով յայտնեցին ծերին.
—Սիրուն Ալվարդին թուրքերը փախցրին.
Զորս-հինգ ձիաւոր զինուած հրացանով
Անցնում էին լուռ մոլոր կածանով.
Հէնց որ մեզ տեսան, նրանք կանգնեցին,
Իրար յայտնելով, առաջ վազեցին.
«Մի տես էն սիրուն, լէյլի աղջկան,
Նըրա պէս հիւրիք երկնքում չը կան.

Դեալի-Էրմանու գողցած Սևուկն էլ,
Արաբ-աշխարհն էլ մըտքէս հանեց նա։
Դէ, տեսնեմ, տըղերք, ով կարայ բըռնել.
Նըրան փախցնողը ջաննաթ կը գընայ»։
Եւ նըրանք տարան սիրուն Ալվարդին,
Կորած ձիու տեղ կապեցին թարքին [1]).
Մենք լըսում էինք դեռ նըրա հարան.
«Ապի ջան, ապի», կանչում էր, «տարան»։

Ծերունին կանգնած քարափի գըլխին՝
Զայրացած ուժգին դարձաւ ամբոխին.
«Հէյ, տըղերք, սև սուդ պահեցէք,
Դափ ու զուռնայի ձէնն էլ կըտրեցէք.
Տեսնում եմ որ դուք շատ ոյժ էք թափել
Եւ գաղանների մեծ որսեր բերել.
Բայց ոչ ոք չի՛ընել դեռ Աւագ-որսկան,
Մինչև չազատի գերի աղջկան.
Վա՜յ, թէ թուրքերն էլ անպատուեն նըրան,
Ամօթ, նախատինք կը մնայ յաւիտեան»...
Դեռ չէր վերջացրել խօսքը ծերունին,
Մի տրաքոց լըսուեց կաղնուտի ձորում։

[1]) Ձիու մէջքի չնաչի մասը։

«Դէ, հասէք, տըղերք, հասէք էն ձէնին,
Կըռիւ է էնտեղ, մարդիկ են գոռում»։
Էլ ժըպիտ չը մնաց ոչ մէկի դէմքին,
Վիշտն ու վըրէժը տիրեց ամենքին.
Լըռեց և՛ քէֆը, և՛ ամեն շըշունչ,
Ծերունին իջաւ ժայռից լուռ ու մունջ.
Ուխտաւորն էլ մոռցած հանդիսի օրը,
Վազեց նըրա հետ կաղնուտի ձորը
Եւ տեսաւ այնտեղ աղբիւրի փոսում
Ընկած թուրքերից արիւն է հոսում.
Կարօն Ալվարդի դէմ կանգնած արի՝
Երդում է որսած աչերը Եա՛ի.

«Ալվարդ, Ա՛լվարդ, սև աչերից
Ես ընկել եմ սար ու ձոր.
Ալվարդ, Ա՛լվարդ, սև աչերից
Դադար չունեմ ոչ մի օր։

Քեզ տեսնելով, կըռիւ ու ջարդ,
Զար մըտքերս ցըրուեցան.
Նըրանց տեղը, սիրո՞ւն Ալվարդ,
Դու ես կապել ծիածան։

Էն օրուանից չոր ժայռն էլ է
Անուշ բուրում, կանաչում:
Էն օրուանից սիրտս էլ է
Արնածարաւ քեզ կանչում:

Ա՛ռ զէնքերս դու մէկ-մէկ,
Ես յաղթուած եմ քո սիրով.
Ա՛ռ զէնքերս, որ երբէք
Ես չեմ տուել ~~[illegible]~~ կռուով:

Ալվարդ, Ա՛լվարդ, սև աչերից
Ես ընկել եմ սար ու ձոր.
Ալվարդ, Ա՛լվարդ, սև աչերից
Ես հալուում եմ օրէց օր»:

Ցետոյ ուխտաւորի հետ նա միասին
Գընաց, պատմելով թուրքերի մասին.
«Հրացանս լցրած երկու գընդակով
Ես նըստած էի կաղնուքու կողքին.
Մէկ էլ ի՞նչ տեսնեմ, գալիս են շարքով
Զորս-հինգ ձիաւոր մի աղջիկ թարքին:
Տեսայ, որ մէկը ճանաչս է գալիս,
Ասլան-բէկին էր նըմանը տալիս.

Աղջիկն էլ, ասի, թէ հայ է թըշուառ,
Տես, թէ ինչ որսով յետ կ'երթամ Լալուար.
Ցանկարծ լըսեցի՝ «վա՛յ, տանում են, վա՛յ»...
Տեսայ, որ կապածն աղջիկ է և հայ.
Մի գընդակ թողի ես ծառի կողքից,
Ասլան-բէկն ընկաւ իր ձիու մէջքից.
Ես նորից լըցրի և նորից ընկան,
Մի մարդ ու մի ձի հազիւ թէ պըրծան.
Ալվարդն էլ եղաւ իմ որսը անգին,
Ահա բերել եմ, որ տամ Աւագին»:

Ուխտաւորը խառնուեց, փընտրում էնըրան,
Ուզում է տեսնել, ո՞վ է քաջ տըղան.
Ծերը դաշոյնը հանեց իր գօտկից,
Տուեց Կարոյին ամբոխի դիմաց
Եւ համբուրելով նըրա ճակատից,
Դողդողուն ձայնով օրհնելով, ասաց.
«Ապրիս դու, Կարո, երկար տարիներ,
Որ միշտ ազատես անմեղ գերիներ.
Լալուարն էլ լինի թող խօսքիս վրկան,
Որ քեզ եմ օրհնում ես Աւագ-որսկան»:

Նորից նոյն զուռնա-նաղարան հընչեց
Եւ քաջ Կարոյին կեանք ու ոյժ մաղթեց.

Ուխտաւորն էլ վերջին ջերմ համբոյրներով
Իջաւ Սուրբ-Սարգսից նեղ կածաններով.
Եւ պար ու երգով Էլուարից նա ցած
Գընաց իր սրրտի մուրազը առած.
Կոյր աշուղներն էլ երգ յօրինեցին
Եւ նոր խգեթի գովքը արեցին։

VI

Աշունն էլ եկաւ. Գուգարք աշխարհում
Սարին ու դաշտին այլ կեանք է եռում:
Խուզելով գառան, ոչխարի բուրդը,
Քոչել է բինէն թողնելով իւրտը.
Լեռներից զուարթ, դիրացած հօտեր
Ձրմեռուան համար իջել են դաշտեր.
Իւրտերը դատարկ սեին են տալիս,
Աղբիւր ու ծաղիկ ողբում են, լալիս.
Մենակ խաղում է, թռչկոտում պախրան,
Սարեր ու ձորեր մընացին նըրան.
Արծիւն էլ տըխուր նըստած ժայռերին՝
Որսեր է փընտրում իր սոված փորին։
Լըցրին բարիքով հորն ու մարանը,
Փոխուելով սարից ամենքն արանը [1]),

[1]) Դաշտ։

Աստուած խընայեց խեղճ նաչարին—
Լաւ հաց ու գինով առատ է տարին.
Հասել են արդէն մըրգեր մեղրածոր,
Կանաչ թըփերը բըռնած դաշտ ու ձոր,
Հասել է ամրան միջօրեան տապին
Բիւր շարաններով խաղողը ճիթ-ճիթ,
Քաղում են նըրան առուակի ափին.
Հընձանից անուշ մաճառը շիթ-շիթ
Կարասն է լըցւում ուրախ բըրբիջով.
Եւ փըրփըրալով դեռահաս գինին
Հանդստանում է միայն թակիչով [1]).
Նորից խաղալով, հանում է բերնին,
Եւ յուզուած, գըժուած խոր դեռանի գըրկում՝
Իր սոսրերկրեայ խուլ երգն է երգում։
Վերջացաւ թէ չէ անկըրակ եփը,
Սկսուեց իսկոյն գիւղացու բէֆը.
Զուռնա-դըհոլի ձայնը զըլւում է,
Հարսանիքների տուտը [2]) բացւում է։

«Ալվարդ ջան, աղջի, եկ լսիր դու ինձ.
Ես օրհնում եմ քեզ հայրական սիրով.

[1]) Նոր գինու եփը իջեցնելու գործիք։
[2]) Ծայր։

Ե՛կ, թէև ծանր է բաժանուել քեզնից,
Բայց նըշանուած ես դու իմ երդումով։
Վաղ ես ունէի մի ողջու�ախպեր [1]),
Նա զէնքով որսի գընալ չը գիտէր,
Արջերի հետն էլ միշտ կոխ էր բըռնում;
Կըռնների զօռով իր որսը անում։
Ողորմած հոգի Արջակեր-Մօսին,
Էդպէս էր նըրա աւել անունը,
Մի օր խօսք գըցեց իր տըղի մասին.
—Իմ ու քո չը կայ, մէկ է մեր տունը.
Թէ որ քեզ լինի աղջիկ զաւակ,
Արի նըշանենք տըղիս հետ, Աւագ.
Նըրանց պըսակենք կենդանի օրով
Ու մենք հեռանանք յաւիտեան սիրով.
Թէ Աստուած էսպէս մեր ուխտը կամի,
Խօսք տուր, որ լինենք իրար խընամի։
Եւ ես երդուեցի, երբ դու մեծանաս,
Մօսունց Աթօյի հետ ամուսնանաս.
Վաղուց է պառկած Մօսին հողումը,
Վաղուց հեռացաւ նա փուչ աշխարհից.
Բայց չեմ մոռացել ես իմ խոստումը,
Որ բարձր է երկրի ակն ու գոհարից.

[1]) Հոգու եղբայր

Իգիթի խօսքը օրէնք ու կարգ է,
Նամարդ ապրելուց մեռնելը փառք է։
Ե՛կ դու՝ լըսելով ծընողիդ կամքը,
Հաւատարիմ կաց քո նըշանածին,
Եւ միշտ յիշելով մօրդ խընամքը,
Ապրիր ու մեռիր միշտ մէկի բարձին»։
Եւ մի համբոյրով գըթոտ հայրական,
Աւագ-որսկանը օրհնեց աղջկան։

Ցանկարծ խեղճ կոյսը գըլուխը թեքեց,
Դէմքը այլայլուեց, նա դողաց լուրից,
Եւ մատաղ կուրծքը նեռի պէս շանթեց
Այն աւետիքը, որ լըսեց հօրից.
Նա ճընշուած գաղտնի ներքին յուզումով
Ձիւնի պէս ճերմակ ձեռքերը կըրծքին
Դեռ սպասում էր դաժան զդացումով,
Ինչպէս անմեղ զոհ ծերունու կողքին։
Թէև արցունքը նա շուտ կուլ տալով
Սիրոյ կըռիւը ծածկեց իր հօրից,
Բայց սիրտն ասում էր տըրոփտրոփալով՝
«Մարդու չեմ գընալ բացի Կարօյից»։
Եւ դեռ յայտնի չէր որսկանին սէրը,
Որով այրուում են երկու սըրտերը.

Բայց ով է գիտում՝ սէրը կը յաղթի,
Թէ նուիրական խոստումն իգիթի։

Քանի գիշեր է, մինչև լուսադէմ
Ծեր, երիտասարդ, այր, կին ժըպտադէմ
Հազար գունաւոր զգեստներ հագին՝
Թընդում են բարձրը Դեպեռի ափին.
Հանդէս է այնտեղ մեծ հարսանիքի,
Զուռնան զըլել է վաղուց սահարին [1]։
Թընդում է յանկարծ ձայնը Աւագի,
Հոսում է սիպտակ ու կարմիր գինին.
Որսկանը՝ առատ վայրի էրէներ,
Երիչ, ոչխար է հարսանքին մորթել.
Եռում են լիքը քառկանթ կաթսաներ [2],
Հարսանեաց ծուխը երկինք է պատել։
Մի տեղ ամբոխը խմբով նըստոտած՝
Անուշ է անում, հարսանիքն օրհնում,
Իսկ աշուղները, մըրցելով հարբած,
Ալվարդի համար երգ են յօրինում.
Մի տեղ սահելով հարսն ու աղջիկներ,
Կազմում են ուրախ շըրջապարի շարք,

[1]) Առաւօտեան երգի եղանակ։
[2]) Զորս կանթ ունեցող մեծ կաթսայ։

Մի տեղ ձողերին վառած պատրոյգներ՝
Երեխայք գոռում, վազում են անկարգ։
Հերթիկների տակ և արձակ բակում
Թընդում են հազար աղմուկ ու երգեր.
Փըրփըրած գինու թասերը ձեռքում՝
Ուռում են քաշ-գան [3]), խորոված, մըրգեր։
Այսօր խընջոյք է, վաղն էլ հանդէս,
Եօթ օր, եօթ գիշեր կը տևի այսպէս.
Գիւղի աղքատը, ծերն ու պատանին
Եօթ օր, եօթ գիշեր հիւր են որսկանին։

Յանկարծ Աւագի ջիրիդը ճօճաց.
«Ջիրիդ է, ջիրիդ», ամբոխը ճըչաց.
Դըհոլը դըմբաց, հեծուորներն անցան,
Կազմեցին միմեանց հակառակ շըրջան։
Զինուած ձողերի սուր նիզակներով
Հէնց բաժանուեցին երկու բանակի՝
Բարձրացրեց փոշին ձին սմբակներով,
Գլուխներ պատռեց զարկը նիզակի.
Եռում է հանդէսն ահեղ ջիրիդի,
Հանում են արագ, զարկում մէկ-մէկի.

[3]) Թոնրի մէջ մսից և ձաւարից պատրաստած՝ հարիսի նման կերակուր։

Ձեռքներին բռնած թաւիշ թաշկինակ,
Դիտում են հեռուից և հարս ու աղջիկ՝
Իսկոյն տալիս են նրան մրցանակ,
Ով որ նշանին նետում է ճարպիկ։
Աթոն էլ եկաւ շատ անգամ անցաւ,
Բայց նա Ալվարդից ոչինչ չըստացաւ.
Ձիերի կրծքից քալաղին [1]) կապած՝
Դեռ փըռփըռալով, քըշում են, թըռչում։
Բայց չի նկատում ամբոխը հարբած,
Որ խեղճ Ալվարդն է ամենից տըրտում։
Շատերը յաղթուած մէկ-մէկ հեռացան.
Մենակ Աւագը ջերիդը ձեռքին՝
Ինչպէս յաղթութեան վիթխարի արձան,
Հանում էր, զարկում փախչողի մէջքին։

Մութն ընկաւ արդէն. փայլում են կրակներ.
Նորից հիւրերը նըստում են շըրջան,
Լըցնելով փրփրած գինով գաւաթներ,
Եռուն քէֆի մէջ կանչում են՝ «հա՛ ջա՛ն»...։
Նորից զուռնան է հանում ազմուկը,
Աշուղը թառին լարում է երգեր.

[1]) Մետաքսի թաշկինակ։

Նորից երգում են ծերն ու մանուկը,
Բըռնելով առոյգ նոր զոփի շարքեր։
Հարբածների հետ Դեպեսը ձորում՝
Փրփրած աչքերով ժայռէ քընարին,
Ծփում է տըխուր, անվերջ փըրփըրում,
Հաղար երանի տալով անցեալին։

Երբ հողմն էր փըչում, Դեպեսը վըշշում
Գիշերուայ վայրի մի տըխուր համերգ,
Իսկ պաղ կայծերով աստղը ղենիթում
Դողալով, դիտում մըռայլ տիեզերք,—
Գիշերուայ նըման մի մուգ սև շալում
Ալվարդը գաղտնի անտառն էր մըտել.
Իսկ վաղուց ծանօթ մըթին դարանում
Նըրան պահապան մնացառն էր պատել։
Նըրա համար չէր երկնի կապոյտը,
Նա չէր դուրս եկել իբրև զբօսանք.
Որպէս ջըրվէժի թափն ու պըտոյտը,
Նըրան քըշել էր վառ սիրոյ հոսանք։
Եւ այդպէս փախած մըթին գիշերով
Հայրական տընից հօրիցը գաղտնի՝
Նա սպասում էր սըրտի զարկերով
Իրան սիրելուն սարերին յայտնի։

Ցանկարծ անտառի մըռայլ թաւուտից
Լըսուեց ամբակի տըրոփ ու դոփիւն.
Քըրտինքը հոսեց կոյսի ճակատից,
Ձերմակեց, դառաւ ինչպէս լեռան ձիւն։
Փայլեցին արդէն ձիու պայտերը
Եւ մի ծանօթ ձայն՝ «Ալվարդ ջան», կանչեց.
Կարմըրին տուին կոյսի այտերը,
Նա սըրտի խորքից ազատ հառաչեց։
Ա՛յ, քեզ ցանկալի երջանիկ րոպէ,
Երբ կարօտ սըրտեր գըտնում են իրար,
Փըշրելով արգելք թէկուզ երկաթէ,
Գըտնում են միմեանց երկու սիրահար։
Հեծուորը թռաւ սև ձիուց շտապ,
Ալվարդին հանեց խիտ մացառներից,
Գըրկեց ու սեղմեց կըրծքին սիրատապ,
Համբոյրներ քաղեց այտ ու շուրթերից։

«Ալվարդ ջան, Ա՛լվարդ, կարօն չըշընչաց,
Ե՛կ, շուտով փախչենք, քանի դիշեր է.
Գիտեմ, իմաստուն ձիս որ խրխնջաց,
Փորձանք լինելը նա զգացել է.
Ա՛ռ զարաբինաս, կախիր քո վզից,
Նա պէտք կը գայ քեզ դիշերը ճամփին,

Մինչև որ թըռած անցնենք անտառից,
Մինչև որ տունս գըտնենք քարափին»։
—Թէկուզ սըրտումս ցըցեն սուր ու նետ,
Ես պիտի ապրեմ ու մեռնեմ քեզ հետ,—
Ասաց Ալվարդն ու բռնկուած յոյզով
Ամուր փաթաթուեց Կարօյի վըզով։
Փախաւ նըրա հետ, գլուխն ու այտը
Ցենած սևուկի փըրփըրուն բաշին.
Զարնուելով քարին, զրնգում էր պայտը
Եւ սերը երգում նրանց ականջին։
Մոռցած ծերունի հօր պատուի մասին,
Կուսական սըրտից հուր էր բըռընկում։
Սարերից ձորեր թև առած սև ձին
Թաղում էր դոփիւնն մըթին ծըմակում։

Ցանկարծ լըսւում է «Հարան ու տարան»,
Հարսանքատանը լըռում է զուռնան.
«Կարօն Ալվարդին փախցըրեց, տարաւ,
Կարօն ամեն ինչ ոտնատակ արաւ...
Թի՛ւհ, անաղուհաց նամարդ արարքին,
Անդամակ մորթեց իգիթ Աւագին»։

Ծերը զարկելով գըտակը գետնին,
Խըռոված ձայնով դարձաւ ամբոխին.

—Էս ութսուն ձըմեռ, էս ութսուն գարուն
Ես կեանք եմ քաշել աշխարհի վըրայ,
Բայց չեմ թողել, որ Աւագի անուն
Մի թեթեւ բանով անգամ սեւանայ.
Էսքան տարի է, որ կըռուի սովոր՝
Արիւնն է եղել ինձ համար քըրտինք.
Էսքան տարի է գըլուխս ալեոր
Չէր կերել էսպէս մուր ու նախատինք.
Բայց դող Կարոյի նամարդ արարքը
Թաղեց որսկանիս պատիւն ու փառքը։
Թէև երդուել եմ, որ էլ որս չանեմ,
Բայց էն նամարդի մուրն էլ ինչ տանեմ,—
Ասաց ու ծերը հրացանը ուսեց
Եւ տըմբտըմբալով խոր ձորը վազեց.
Ո՛մանք ձիերով, ո՛մանք էլ ոտով
Վազեցին հետը զանազան ճամփով։

Աւագ-որսկանը իր զինուած խըմբով
Շատ է թափառել անտառ ու ծըմակ,
Անցել է ամեն մի նեղլիկ ճամփով,
Ուր որս է արել ջահել ժամանակ.
Բայց ո՛չ փախցնողին, ո՛չ էլ աղջըկան
Նա դեռ չէ գըտել երկար փընտրելով.

«Ալվարդն ու Կարօն չըկան ու չըկան».
Ասում է դարձեալ նա դեղերելով։
Մի օր յուսահատ, տանջուած ու անքուն,
Անցնելով արդէն վերջին կիրճերը,
Մի խիտ, գարեւոր մըթին ծըմակում
Ծերունին գըտաւ ձիու հետքերը,
Եւ լըսեց ինչպէս ձիու տըրոփով
Ալվարդն ու Կարօն թըռչում են ճամփով։
«Հէյ, Կարօ, Կարօ», որսկանը գոռաց.
Սիրահարները մընացին սառած.
«Էդպէս ես պատուում հին ազուհացը,
Էդպէս ես սիրում օրէնքն իգիթի.
Քեզ նըման նամարդ գող արարածը
Ինչի՞ չի վաղուց զոհուել գընդակի»։

Կարօն շուարած որպէս երազում՝
Թէև հասկացաւ, թէ ով էր խօսում,
Բայց գընդակ տըժժաց, անտառը թընդաց,
Եւ նա գոլորուեց սև ձիուցը ցած։
Ալվարդն իր գանգուր գիսերն է փետում.
«Վա՛յ, Կարօ ջան, վա՛յ», անտառն է թընդում։
Բայց արդէն մահը մըռայլ թեւերով
Թըռաւ ու գըրկեց իգիթ Կարոյին.

Այրուած շուրթերը՝ վայ ջուր կանչելով,
Կըպան, փակելով հուրը սիրային։

Եւ զարարինան պինդ ձեռքին սեղմած՝
Ալվարդը կանչեց հօրը զառամած.
«Ե՛կ, ապի ջան, եկ անտառից շուտով,
Ե՛կ, ինձ էլ զարկիր մի նոր գընդակով.
Ա՜խ, անսէր կեանքը ծանր է գեհենից,
Ե՛կ, ապի ջան, եկ, յետ առ ինձանից.
Լաւ է մի անգամ սիրելով մեռնեմ;
Քան թէ միշտ անսէր թագուհի լինեմ.
Մեզանից յետոյ, էյ, սարեր, ձորեր,
Աղբիւր ու առու ուրախ, քըշքըշան,
Երգեցէք՝ ինչպէս կորան մեր օրեր.
Երգեցէք՝ «Ալվարդն ու Կարօն չըկան»։

Սև ծըխի միջից գընդակը թըռաւ...
Ալվարդը վերջին մահուան տագնապում
Սիրուն գլուխը գեանի վրայ դըրաւ
Եւ լուռ գալարուած խոտ է պոկոտում։
Դեռ թըռթըռում են նըրա շուրթերին
Կեանքի գոյները մէկ-մէկ մարելով,
Սըփրթնած վարդը կարմիր այտերին
Հրաժեշտ է կարդում ընդմիշտ թողնելով։

Մարում է հուրը սև-սև աչքերի,
Սահում է կեանքը անհուն տենչերի.
Ծորում են կամաց արեան շիթերը,
Սպառում կեանքի վերջին ոյժերը.
Եւ ամեն մի նոր ծորած կաթիլով
Կարծես ասում է՝ կեանք, մընաս բարով։

Վերջին արևը ճառագայթներով
Դեռ արևմուտքից անտառի խորքում՝
Սիրահարների լուռ դիակներով
Խաղում է անհոգ, փարւում ու գըրկում։
Տրաքոցի վըրայ հեռու ձորերից
Վազելով հասաւ հարսանքաւորը,
Արիւն-արցունք է թափւում աչքներից,
Մենակ չի լալիս ծեր յանցաւորը։
Գըզգըզուած գիսեր, գընդակը կըրծքին՝
Սարսափ էր ազդել Ալվարդն ամենքին.
Օտար, բարեկամ ողբում են նըրան,
Անէծք թափելով Աւագի վըրան.
Կանչում են նըրան. «Ինչի՞ չես գալիս,
Ինչի՞ չես դու էլ մի բերան լալիս»։

Բայց նըրանց լացը, ճիչն օրհասական
Դարձեալ չեն աղդում քարացած ծերին.
Եւ անշարժ կանգնած ծերունի հրսկան
Նայում է միայն նրանց կոծերին։
Անտատան յենուած նա նուիրական
Հին աղուհացի պատուի օրէնքին՝
Էլ չէր ափսոսում միակ աղջկան.
Այլ բան էր զդում իգիթի հոգին։
Թէև նա վերջին օրը ծերութեան
Ներկեց իր միակ որդու արիւնով,
Բայց համոզուած էր, որ արդարութեան
Չի դաւաճանել դեռ ոչ մի բանով.
Որ ափսոսանքը և լացն ու կոծը
Էլ չեն բուժելու սըրտի սև խոցը.
Այլ նըրան միայն օրէնքն իգիթի
Իր անդարձ ոյժով մի օր կը դատի։
Մերթ թըռչում է նա դէպի ապադան,
Ուր ստուերներով դատի պիտի դան
Նամարդ սերնդի տըգեղ արարքը
Եւ հին իգիթի պատիւն ու փառքը.
Մերթ լուռ քարացած առանց արցունքի
Դէպի նոր բըսնող բըլուրն է դառնում;
Մերթ նըրա դէմքը թաղուող յանցանքի
Տըխրութեան ամպն է յանկարծ մըռայլում.

Մերթ անշարժ կանգնած հրացանը ձեռին,
Ինչպէս դարաւոր լեռների արձան,
Նա հուժկու մէջքը դէմ տուած ժայռին՝
Նայում է թաղմանն անթարթ ու անձայն։
Եւ հին կընճռոտած, ապառաժ դէմքով
Կարծես ծաղրում է դեռ լալկաններին,
Որոնք յանձնում են հողին խընամքով
Իր աչող որսած սիրեկաններին.
Ցանկարծ զօռ տալով երկար չիբուխին,
Նա վերջը դարձաւ լալկան ամբոխին.

«Հէյ գիտի հա, հէյ, իգիթ ժամանակ,
Անցար, գընացիր, թողիր ինձ մենակ.
Ո՞ւր են առաջուայ սէրն ու հաւատը,
Պապերի դըրած օրէնքն առաջին.
Իգիթ չէր ասում էն տըղամարդը,
Որ չէր խոնարհւում սուրբ աղուհացին.
Արար-աշխարհի օրէնքների դէմ
Ես նըրանից մեծ օրէնք չը գիտեմ։
Եւ ինչ արարած, ինչ ադամորդի
Կոտրելով պատիւն, անունն իգիթի,
Ապրում է մենակ ինքը, նամուսով
Դըրացուն պատուից գըցելու յոյսով։

Թէկուզ աշխարհն էլ դուլ անի իրան,
Իսկի արդամարդ չեմ ասիլ նըրան։
Մարդիկ մանրացան մըժեղի նըման,
Արցունքն է դառել ցաւերին դարման.
Բայց ողբն ու լացը էլ ինձ չեն ազդիլ,
Ծով էլ որ դառնամ, արցունք չի կաթիլ։
Հէ՛յ գիտի հա՜, հէ՛յ, իգիթ ժամանակ,
Անցար, գընացիր, թողիր ինձ մենակ.
Հեռացէք դուք էլ, թողէք միանամ
Ժայռ պապերիս հետ, ես էլ քարանամ»։
Ասաց ու լըռեց ծերը գըլխակոր,
Ինչպէս վիթխարի մի ժայռի բեկոր։

Բայց հին վանքերի բարձրը գմբէթից
Չեն հընչում մահուան զանգի ձայները,
Եւ շարականից, բուրվառ ու խաչից
Զըրկուեցան նրանց պաղ մարմինները.
Հարսանքաւորի ողբն ու լացը
Եւ սև նըժոյգի խորին թառանչը,
Աչնան հողմի հետ արձագանք տալով,
Երգում են ձորում թաղման շարական.
«Ա՜խ, Ալվարդ, կարո՞», լուռ հառաչելով
Փորում են նըրանք մի խոր գերեզման

Եւ սիրակորոյս զոյգ նըշխարները
Յանձնում են ցաւով հայրենի հողին.
Իսկ բըլուր դարձած սիրահարները
Պատում են սիրոյ արկածն անցնողին։

Դառն ափսոսանքով ամբոխը գընաց,
Անտառում մենակ սրսկանը մընաց.
Նա քաշուեց հեռու մութ ծըմակները,
Հսկայ ժայռերին եղաւ դըրացի,
Ուր չեն որոտում ոչ գընդակները,
Ո՛չ լըսւում ձայնը մարդկութեան լացի.
Գըլուխ չը թեքած մարդկանց օրէնքին՝
Նա եղբայրացաւ յաւերժ տարերքին։

Երբոր բացւում են վայրի վարդերը,
Երբ դարնան բոյրով ձորն է կանաչում;
Գալիս են այնտեղ մատաղ կոյսերը,
Ալվարդին իրանց սէրը մըրմընջում;
Մի-մի կըտոր շոր թուփից կապելով,
Ցիշում են նըրան արցունք թափելով,
Եւ այն մամռապատ մենակ բըլրակը
Նոր կեանք է առնում հին կաղնու տակը։
Երբ եղջերուն է այնտեղ բառաչում;
Կամ եղնիկն անհոգ վըրայից թըռչում;

Որսորդն աղբիւրից պաղ ջուր խմելով,
Անցնում է որսի հետքից վազելով,
Ցանկարծ ցոյց տալով բոլորակն ընկերին,
Դառնում է վաղուց անցած դէպքերին.
—Դու չահել ես դեռ, լաւ չես ճանաչում;
Ալվարդն ու Կարօն այստեղ են հանդչում:
Ո՞ւր են առաջուայ մարդիկն ու սերը,
Աւագ-որսկանի արած որսերը։
Ասում են, երբ որ ամպի փէշերը
Փըռուելով սարից, ձորերն են դըրկում,
Լըսւում է յանկարծ մըթին գիշերը
Մի խոր հառաչանք ժայռերի կըրծքում:
Ու ամպերի մէջ Աւագ-որսկանը
Դալիս է հըսկում իր աղջըկանը.
Եւ նորից ծածկած նա վիշտը ներսից՝
Փախչում է նամարդ մարդկանց երեսից։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
«Ս.Ս.Հ.Դ. Պետական Գրադարան»
7/XI-1922
ՍԻՍԻԱ. Ինվենտարի
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0359495

43966

ԳԻՆՆ Է 40 ԿՊԿ.

Գնել ցանկացողները թող դիմեն Թիֆլիսի գրավաճառներին։